ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ.Լեռնավան, Հեռ. (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

N 21
23 փետրվար 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Լեռնավան համայմքի ավագանու N 03-Ն որոշումը, հավելված 1 և հավելված 2-ը:

առդիր 8 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ՝ Է. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
22, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 03-Ն

ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Լեռնավան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Լեռնավան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել 2016 թվականի Լեռնավան համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանվածկարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պատական իրավական փորձաքննություն անցկացնելու մասին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՍՏՅՈՊԱ
2. ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԲԵԳԼԱՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՉԱԽԱԼՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Լեռնավան
համայնքի ավագանու 20.02.2017թ.
թիվ 03-Ն որոշման

Լեռնավան համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման

տարեկան հաշվետվություն

2016թ. ընթացքում գյուղապետարանի գործունեությունը ուղղված է եղել համայնքի սոցիալ- տնտեսական խնդիրների լուծմանը, որոնք մեզ հաջողվել է հաղթահարել ոչ վատ արդյունքներով:

Անցած տարվա ընթացքում կատարվել է բավականին աշխատանքներ , որոնցից կարելի է առանձնացնել հետևյալը.

2016թ. բյուջեն կազմում է 49193.6 ՀՀ դրամտոկոսային վերցրած բյուջեն կատարվել է 99.8 - %-ով, որիցհողի հարկի մասով պլանային նախատեսված է եղել 1212.07 դրամ փաստացի կատարվել է 1211.8 դրամ 100- %

Դոտացիայի և պատվիրակված լիազորությունների մասով կատարվել է 100 - %

Հողի վարձակալությունը նախատեսված է եղել 540.0 դրամ փաստացի հավաքագրվել է 540.0 - դրամ 100 % :

Գյուլքահարկը նախատեսված է եղել 1988.8 - կատարվել է 100 - %

Բյուջեի ծախսային մասում պատկերը հետևյալն է

	նախատեսված	կատարվել է
Աշխատավարձ	16947.8	16947.8

Կառավարման մարմնի պահպանման ծախս 23166.6

2016թ. ընթացքում համայնքի բյուջեից շուրջ 51 ընտանիքների ցուցաբերվել է դրամական օգնություն 1.660.0 դրամի չափով:

Ծննդաբերությունը համայնքում խրախուսելու նպատակով համայնքի 30 ընտանիքների տրվել է 20000-ական դրամ միանվագ գումար, 600000դրամ:

1.000.000 դրամ տրամադրվել է 27 ուսանողների, որպես ուսման վարձ, միջին հաշվով ամեն ուսանողին 30- 40 հազար դրամ:

I դասարանցիներին՝ 14 աշակերտի տրվել է նվերներ՝103320 դրամի չափով: Ուսուցիչների տոնին 37 ուսուցչի տրվել է նվերներ 218.7 դրամի չափով, մարտի 8-ին՝ 170.2 դրամ:

Նոր տարվան համայնքի թվով 141 երեխաների տրվել է նվերներ 176250 դրամի չափով: Ամանորի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, հրավիրվել է ձմեռ պապ և ձյունանուշիկ: 0-4 -րդ դասարանի 64 երեխայի 80.0 դրամի չափով նվերներ ամանորին:

Համայնքի ճանապարհների բարեկարգման, ճանապարհները ձյունից մաքրելու և հարթեցման նպատակով կատարվել է աշխատանքներ 600.0 հազար դրամի չափով:

Համայնքը անմասն չի մնացել մարզում և հանրապետությունում կատարվող միջոցառումներից և իր համեստ ներդրումն է ունեցել Համահայկական Հիմնադրամի մարաթոնին:

Բարձր մակարդակի վրա է գտնվում գյուղապետարան-դպրոց հարաբերությունները:
Դպրոցում ջեռուցում ապահովելու նպատակով համայնքի բյուջեից փոխանցվել է 200 հազար դրամ:
Նախակրթարանի 2 աշխատակցի վճարվել է աշխատավարձ 791.0 գումարի չափով:

Դպրոցը չունի սպորտդահլիճ, դասընթացներն անցկացվում են դասասենյակում:

Արդեն ավանդույթ է դարձել ավարտական դասարանների էքսկուրսիաների կազմակերպումը դեպի Հայաստանի տեսարժան վայրեր, որի ֆինանսական ծախսերը հոգում է գյուղապետարանը՝ տեղական բյուջեի հաշվին:

Դպրոցի հետ համատեղ կազմակերպվում է պետական տոների և հիշատակի օրերի միջոցառումներ:

2016թ. չնայած կարկտահարությանը գյուղատնտեսական աշխատանքների համար տարին այնքան էլ վատ չէր:

2016թ. ընթացքում համայնքում ստացվել է 2100 g ցորեն և 1900 g գարու բերք

1 հեկտարից ստացված միջին բերքատվությունը կազմել է 35 g ցորեն, 32.5 g գարի

Կատարվել է 60 հեկտար աշնանացան

Համայնքում մշակվել է 43 հեկտար կարտոֆիլ , 1 հա կաղամբ, 1 հա գլուխսոխ, 1 հա սխտոր. 5 հա այլ բանջարեղեն

1 հա կաղամբի բերքատվությունը 400g , կարտոֆիլինը՝ 250 g

Կրտակվել է 495 g խոտ, 250 g ծղոտ

Այս ցուցանիշները գյուղի բնակլիմայական պայմաններում գոհացուցիչ են և այս ամենը ես կապում եմ ՀՀ Կառավարության կողմից տարվող գյուղատնտեսական ճիշտ և նպատակային քաղաքականության հետ, քանի որ համայնքին է տրամադրվել 35,8 տոննա էժան պարարտանյութ, 4 տոննա 200 կիլոգրամ ցորենի սերմացու, 15 տոննա դիզվառելանյութ 280 դրամով, առվույտի՝ 100կգ, գարու՝ 1190կգ, կորնգանի՝ 500կգ սերմացուներ, եգիպտացորենի՝ 150 կգ:

2017 թվականի գարնանացան աշխատանքների համար հայտ է ներկայացվել մարզպետարան 40 տ պարարտանյութ, 2տ գարու, 200կգ կորնգանի, 100կգ առվույտի և 200կգ եգիպտացորենի սերմացուներ մատչելի գներով, կառավարության ծրագրով ձեռք բերելու:

2016թ. անասնապահության բնագավառում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները՝

խոշոր եղջերավոր անասուն --- 432

մեղվաընտանիք --------- 187

թռչուն ---------- 1617

Համայնքի ձեռքբերումներից եմ համարում նաև ծնված երեխաների աճը մահի նկատմամբ , ծնված երեխաների թիվը՝ 23 , մահը՝ 11

2016թ-ին , «Լեռնավան» հիմնադրամի համաֆինանսավորմամբ Լեռնավան համայնքի կենտրոնական մասում գտնվող կամուրջը վերակառուցվեց, որտեղ համայնքապետարանը համայնքի բյուջեից ներդրեց 876000 դրամ:

2017 թ. ընթացքում գյուղապետարանի գործունեությունը նույնպես պետք է ուղղված լինի համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

2017 թվականի ընթացքում կիրականացվի նաև ոռոգման ցանցի վերանորոգում և ընդլայնում, ծրագրի իրականացման համար դիմել ենք Շեն կազմակերպությանը հովանավորելու համար, այն ընթացքի մեջ է, իսկ համայնքի ներդրումը 10%-ի չափով:

Լեռնավան համայնքն ունի բազում հիմնախնդիրներ, որոնք կցանկանայինք ներկայացնել ձեր ուշադրությանը

Համայնքի համար հիմնահարց է բնակարանաշինությունը:

Աղետի գոտու վերականգնում ծրագրով 28 ընտանիքներ ընդգրկված են հերթացուցակում , սակայն 4 –ը բնակարանի վթարայնության աստիճանը փոխելու պատճառով՝ 4-րդ կարգը դարձել է 3-րդ, մերժվել է , 1 ծուխ մարել է, շահագործման է հանձնվել 4 բնակարան, 3 տնտեսություն դատարանի վճռով ընդգրկվել է ծրագրում, 3 ընտանիք 1 սենյականոցի փոխհատուցում են ստացել, ընթացքի մեջ են 14 բնակարանի շինարարություն, սակայն 2016 թվականին շինարարություն չի իրականացել;

Այժմ 65 ընտանիքներ դեռևս ապրում են վագոն-տնակներում և ժամանակավոր կացարաններում, այս թվի մեջ մտնում են աղետի հետևանքով բնակտարածություն չկորցրած ընտանիքները:

Գյուղի համար առաջնահերթ հիմնախնդիր է մանկապարտեզի կառուցումը, քանի որ գյուղում կա 0-5 տարեկան 141 երեխա, որից մոտ 40-ը կհաճախեն մանկապարտեզ:

Գյուղում առկա է գազամատակարարումը, սակայն գազի խողովակների ներքին ցանցի ընդլայնում չլինելու պատճառով շատ ընտանիքներ չեն կարողանում օգտվել բնական գազից:

.Գյուղն ունի խմելու ջրի ներքին ցանց՝ 5կմ երկարությամբ, սակայն խողովակների մաշվածության պատճառով ջրի կորուստը հասնում է 40-50%: Խմելու ջրի ցանցը, ինչպես նաև ջրամբարները հիմնանորոգման կարիք ունեն: Ջրային ցանցը կառավարության որոշմամբ հանձնվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսությանը:

Համայնքում աղբահանություն իրականացնելու նպատակով ձեռք ենք բերել 15 աղբամաններ 975000 դրամ և այս տարվանից կիրականացվի աղբահանություն: Բյուջեով նախատեսված է նաև 15 աղբաման ձեռք բերել:

2017 թվականի ընթացքում կատարվելու է նաև ճանապարհների լուսավորության ընդլայնում:

Գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհները գտնվում են անբարեգարգ վիճակում, անհրաժեշտ է պարբերաբար վերանորոգում՝ փոսալցման և հարթեցման աշխատանքներ կատարել:

Գյուղն ունի գյուղատնտեսական տեխնիկայի նորացման կարիք, տրակտորներ, և գյուղատնտեսական սարքավորումներ:

Այժմ մեր նպատակն է զարգացնելով գյուղը նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, կանխել երիտասարդ ընտանիքների արտագաղթը:

Հարգելի հյուրեր, հայտնում ենք մեր շնորհակալությունը համայնքի նկատմամբ պարոն մարզպետի և մարզպետարանի աշխատակիցների ցուցաբերած ուշադրության համար:

Այս բոլոր խնդիրների լուծումը մենք տեսնում ենք մարզպետարանի հետ սերտ համագործակցությամբ:

Հուսով ենք մեր միասնական աշխատանքի շնորհիվ Լեռնավան համայնքը նույնպես զարգացում կապրի և մեր շատ համագյուղացիներ կվերադառնան իրենց հայրենի օջախները:

Համայնքի ղեկավար Վ. Վարդանյան

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի Լեռնավան
համայնքի ավագանու 20.02.2017թ.
թիվ 03-Ն որոշման

ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2014-2017թթ.համայնքի զարգացման քառամյա ծրագրում ընդգրկված ծրագրերը ուղղված են համայնքի սոցիալ- տնտեսական խնդիրների լուծմանը, որոնք մեզ հաջողվել է իրականացնել մի մասը ամբողջությամբ, որոշ ծրագրեր ընթացքի մեջ են:

Անցած տարվա ընթացքում կատարվել է բավականին աշխատանքներ , որոնցից կարելի է առանձնացնել հետևյալը. համայնքի աշխատակազմի պահպանում և բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցում ծրագրով.

	նախատեսված	կատարվել է
Աշխատավարձ	16,947,8	16,947,8
Կառավարման մարմնի պահպանման ծախս՝	23,166,6	

2016թ. ընթացքում համայնքի բյուջեից շուրջ 51 ընտանիքների ցուցաբերվել է դրամական օգնություն 1.660.0 դրամի չափով:

Օգնդաբերությունը համայնքում խրախուսելու նպատակով համայնքի 30 ընտանիքների տրվել է 20000-ական դրամ միանվագ գումար, 600000 դրամ:

1.000.0 դրամ տրամադրվել է 27 ուսանողների, որպես ուսման վարձ, միջին հաշվով ամեն ուսանողին 30-40 հազար դրամ:

Համայնքի ճանապարհների բարեկարգման, ճանապարհները ձյունից մաքրելու և հարթեցման նպատակով կատարվել է աշխատանքներ 600 հազար դրամի չափով: Գյուղամիջյան կամրջի վերանորոգման աշխատանքների համար համայնքի բյուջեից ներդրվել է 876000 դրամ

Համայնքում աղբահանություն իրականացնելու նպատակով ձեռք ենք բերել 15 աղբամաններ 975000 դրամ և այս տարվանից կիրականացվի աղբահանություն: Բյուջեով նախատեսված է ևս 15 աղբաման ձեռք բերել:

2017թ. ակնկալվում է պետական աջակցությամբ կառուցել համայնքային կենտրոնի շենք, որում կընդգրկվի գյուղապետարանը և մշակույթի տունը , որտեղ կիրականացվի նաև կուլտուր-մշակութային միջոցառումներ: Աշխատանքները իրականացնելու համար դիմել ենք Լոռու մարզպետին, ԱԺ պատգամավոր Հովհաննես Սահակյանին՝ միջնորդությամբ դիմելու կառավարությանը, համայնքային կենտրոն կառուցելու նպատակով:

2015թ. դիմել ենք «Շեն» բարեգործական հիմնադրամին համայնքի ոռոգման ցանցի նորոգման և ընդլայնման ծրագիրն իրականացնելու նպատակով: Համայնք է այցելել հիմնադրամի Վանաձորի ներկայացուցիչ՝ Նորիկ Մարգսյանը և համապատասխան մասնագետը, որը կատարել է համապատասխան չափագրումներ: Ծրագիրը հիմնադրամի կողմից արժանացել է հավանության և իրականացումը կկատարվի 2017 թվականին:

Գյուղի համար առաջնահերթ հիմնախնդիր է մանկապարտեզի կառուցումը, քանի որ գյուղում կա 0-5 տարեկան 141 երեխա, որից մոտ 13-ը հաճախում են նախակրթարան ,իսկ մնացածը մանկապարտեզի տարիքի են և չեն կարողանում օգտվել նախակրթական ծրագրերից: Մանկապարտեզի կառուցման նպատակով դիմել ենք «Հայաստան» համահայկական հիմնադրամին, ակնկալում ենք դրական պատասխան ստանալ:
Գյուղում առկա է գազամատակարարումը, սակայն գազի խողովակների ներքին ցանցի ընդլայնում չլինելու պատճառով շատ ընտանիքներ չեն կարողանում օգտվել բնական գազից: Գազի ներքին ցանցի ընդլայնում իրականացնելու համար դիմել ենք «Հայռուսգազարդ»-ի Սպիտակի մասնաճյուղին, համապատասխան աշխատանքներ իրականացնելու նպատակով:

.Գյուղն ունի խմելու ջրի ներքին ցանց՝ 5կմ երկարությամբ, սակայն խողովակների մաշվածության պատճառով ջրի կորուստը հասնում է 40-50%: Խմելու ջրի ցանցը, ինչպես նաև ջրամբարները հիմնանորոգման կարիք ունեն: Այդ նպատակով դիմել ենք ՀՀ գյուղնախարարության «Ջրային տնտեսությանը» հիմնանորոգում կատարելու համար:

2016թվականին դիմել ենք Լոռու մարզպետարան ճանապարհների լուսավորության ընդլայնում կատարելու համար ,ծրագիրն ընդունվել է և 2017 թվականին այն կիրականացվի:

Համայնքի ղեկավար Վ. Վարդանյան